



## Ախուրյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղը հիմնադրվել է 1800-1805թթ. արևմտյան Հայաստանի Բասենի, Կարսի, Սեբաստիայի, Ալաշկերտի գավառներից տեղահանված հայերի կողմից:

Մինչև 1945թվականը գյուղը կոչվել է «Դուզքենդ», որը թուրքերենից թարգմանաբար կոչվում է հարթ գյուղ: Մ.թ.ա 8-րդ դարում Արգիշտիի թագավորը Բասենում Ախուրյան անունով քաղաք է հիմնադրել, որի անունով «Արփաչայ» գետը կոչվել է Ախուրյան, այնուհետև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1945թվականի որոշմամբ գյուղը վերանվանվել է Ախուրյան՝ Արփի լճից սկիզբ առնող և Արաքս գետի աջ վտակը հանդիսացող Ախուրյան՝ «Արփաչայ» գետի անվամբ:

Ախուրյան անունը ծագել է հետևյալ կերպ . հաճախակի երաշտներից , աղետներից սարսափահար հողագործը նայել է խորունկ կիրճերում գտնվող գետին և թևաթափ հառաչել . ախ ուր , ախ ուր ..... : Հառաչանքը խառնվել է ալիքվող ջրերին ու գետակը կնքվել է Ախուրյան : Սա ավանդաբար մեզ հասած գրույց է, ժողովրդական պատկերավոր մտածողության մի պատառիկ:

Սակայն Ախուրյան անունը շատ հին է, այն առաջացել է Վանի արձանագրություններում հիշատակված «Եթիումի երկիր» Մարիդամիշի մոտակայքում գտնվող Ախուրյանի երկրամասի անունից :

Ըստ տեղեկատվական բառարանային տվյալների գյուղի բնակչությունը կազմել է՝ 1831թվականին – 456, 1897թվականին - 1635, 1926թվականին - 2447, 1939թվականին - 2320, 1956թվականին - 1966, 1970թվականին - 3812, 1979թվականին - 6364, 1988թվականին - 9274, 2000թվականին – 10839:

Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո 1920-1924թվականներին Ախուրյանը գտնվել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի կազմում: Մինչև 1930թվականը Անիի, Ամասիայի, Արթիկի, Ազատանի, Թալինի հետ մտել է Լենինականի գավառի մեջ և կոչվել է Դյուզքենդի գավառակ, իսկ գավառների վերացումից հետո մտել է Լենինականի շրջանի մեջ:

1937թվականի դեկտեմբեր ամսին Հայաստանում կազմավորվել են 11 նոր շրջաններ, որոնց թվում Դյուզքենդի շրջանը: Ախուրյան շրջկենտրոն կոչվող տարածքը կառուցվել է մոտ 1960-ական թվականներին, վերջինս դարձավ Ախուրյանի շրջանի կենտրոնը՝ շրջկենտրոն: Ունեցել է 41 բարձրահարկ շենքեր, 1404 բնակարաններով :

<<Վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի

Հանրապետության օրենքով 1996թվականին Ախուրյան շրջկենտրոնը ընդգրկվել է Ախուրյան համայնքի ցանկում իր մեջ ներառելով երեք բնակավայր՝ գյուղ Ախուրյան , Ախուրյան շրջկենտրոն և Նոր Ախուրյան :

Մինչև 1991թվականը գյուղում տնտեսավարման ձևը եղել է կոլխոզայինը, այնուհետև 1991-1992թվականներին համայնքում իրականացվել է սեփականաշնորհման ընդհանուր գործընթաց:

Ախուրյան գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս - արևմուտքում, Շիրակի մարզի կենտրոնական մասում, հեռավորությունը մայրաքաղաքից 126կմ է: Համայնքը սահմանակից է Արևիկի, Կառնուտի, Մուսայելյանի, Կամոյի, Շիրակի համայնքների վարչական տարածքներին: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից միջինը 1536մ բարձրության վրա, կլիման ցուրտ է տեղումները սակավ, դրանց տարեկան միջին քանակը կազմում է 500մմ:

Մշակության համար պիտանի հողերն ունեն սևահողային կառուցվածք:

Տարածքում առկա պատմական հուշարձաններ և զբոսաշրջության առումով հետաքրքրություն ներկայացնող վայրեր , հանգստի գոտիներ չկան :

Գյուղի <<Սուրբ Նշան>> գմբեթավոր եկեղեցին կառուցվել է 1858 թվականներին, որը վերակառուցվել է 2008թվականին:

Գյուղի հիմնադիրները եղել են Ճանճուռյանների, Բաղդիանների, Մաթոսյանների տոհմից:


Գյուղի նշանավոր մարդկանցից են Գեղամ Փիլոսյանը /Խորհրդային Միության հերոս /, Լուսիկ Բառնակյանը /գրող/, Սուրեն Մուրադյանը /մանկագիր/ Հովհաննես Դավթյանը /քիմիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր/, Մամվել Ավետիսյանը /ՀՀ ԱԺ պատգամավոր 1999- 2001թթ. գյուղատնտեսական գիտությունների դոկտեր պրոֆեսոր, 2001թվականից մինչ օրս ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ / , Ռազմիկ Մաթևոսյանը /ՀՀ ԱԺ պատգամավոր, 1995-1999թթ դոցենտ,

ԳՄԻ պրոռեկտոր/, Սամսոն Դավոյանը/ տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ռեկտոր/:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքը

Հայաստանի Հանրապետության ամենախոշոր գյուղական համայնքն է, վարչական տարածքը կազմում է 2846.7 հա, ունի 9119 բնակիչ, 1996թվականի նոյեմբերից մինչև օրս համայնքը անընդմեջ ղեկավարել է Արծրունի Իգիթյանը:

Գեղամ Փիլոսյան - Խորհրդային Միության հերոս

Երկիր	 Հայաստան
Մարզ	Շիրակի
Հիմնադրված է	1800-1805թթ
Տվյալ կարգավիճակում կարգավիճակում	1960-ից
Մակերես	28,46 կմ <sup>2</sup>
Բարձրություն ծովի մակարդակից	1 540 մ
Կլիմայի տեսակ	507
Խոսվող լեզուներ	Հայերեն
Բնակչություն	9668 <sup>[1]</sup> մարդ(2012)
Ազգային կազմ	Հայեր
Կրոնական կազմ	Հայ Առաքելական եկեղեցի
Տեղաբնականուն	Ախուրյանցի
Ժամային գոտի	UTC+4
Հեռախոսային կոդ	+374 312
Փոստային ինդեքսներ	2601-2602
Ավտոմոբիլային կոդ	46